Գեղաղիր, Ողջաբերդ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լեռնաշղթայով անցնելով 314մ, հասնում է սարի գագաթի թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, առվով անցնելով 322մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհով անցնելով 461մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, լեռան լանջով, թիվ 4-6 սահմանակետերով անցնելով 566մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, բարձրանում լեռան գագաթը, անցնում 444մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով, թիվ 9-15 սահմանակետերով անցնելով 1139մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, սարի լանջով, առվով անցնելով 582մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, թիվ 18-23 սահմանակետերով անցնում 1708մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, ճանապարհով, թիվ 25-31 սահմանակետերով անցնում 1176մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 419մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լեռան լանջով, թիվ 34-35 սահմանակետերով անցնելով 824մ, հասնում է Գեղաղիր, Հացավան և Գառնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7955մ է :

ԳԵՂԱՂԻՐ – ՈՂՋԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Գեղաղիր, Ողջաբերդ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով դաշտային ճանապարհով, թիվ 1-2 սահմանակետերով 1417մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք և, անցնելով թիվ 4-7 սահմանակետերով 3000մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում

834մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 120մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում է 563մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 125մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է հարավ-արևելք և, անցնելով 107մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնելով թիվ 14-15 սահմանակետերով 1043մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 198մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք և, անցնելով 259մ, հասնում է Գեղաղիբ, Ողջաբերդ և Ջովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7666մ է:

ԳԵՂԱՂԻԲ – ՋՈՎՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Գեղաղիբ, Ողջաբերդ և Ջովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 223մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք և, անցնելով 150մ, հասնում է Գեղաղիբ, Կամարիս և Ջովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 373մ է:

ԳԵՂԱՂԻԲ – ԿԱՍԱՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Գեղաղիբ, Կամարիս և Գառնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 235մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով թիվ 2-3 սահմանակետերով 517մ, հասնում է Գեղաղիբ, Կամարիս և Ջովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 753մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՍԱՐՁԻ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գեղաշեն գյուղական համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ջառ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Սևաբերդի գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղարքունիքի մարզին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Գառնի գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Կամարիս գյուղական համայնքին:

ԳԵՂԱՇԵՆ – ՋԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Գեղաշեն, Ջառ և Կամարիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-18 սահմանակետերով անցնում 2850մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 1074մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 487մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Այստեղից թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 493մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 28 սահմանակետով անցնում 184մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 30-34 սահմանակետերով անցնում 2471մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 36 սահմանակետով անցնում 639մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 143մ, հասնում է Գեղաշեն, Ջառ և Սևաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8342մ է:

ԳԵՂԱՇԵՆ – ՍԵՎԱԲԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

3148.1մ նիշ ունեցող Գեղաշեն, Սևաբերդ գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 683մ, հասնում է 3127.3մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, 3115.3մ նիշ ունեցող բարձունքով և թիվ 2 սահմանակետով անցնում 1280մ, հասնում է 3319մ նիշ ունեցող Աղմաղան սարի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք և, անցնելով 527մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք և, անցնելով 928մ, հասնում է 3220.3մ նիշ ունեցող Ջեյնարիթե սարի վրա գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ և, անցնելով 216մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք, ապա արևմուտք, ջրբաժանով, թիվ 7 սահմանակետով անցնում է 2444մ, հասնում 2827մ նիշ ունեցող լճակից հարավ գտնվող ավերակի հարավային եզրի թիվ 8 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում է 963մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից սահմանագիծը, շարունակվելով նույն ուղղությամբ, ջրհավաքով անցնում է 778մ, հասնում ձորակների հատման տեղում գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք և, անցնելով 494մ, հասնում է բլրի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ-արևելք և անցնելով 157մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևմուտք, անցնում է 926մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևմուտք , անցնում է 648մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, անցնում թիվ 15 սահմանակետով 1178մ, հասնում է Գեղաշեն, Սևաբերդ և Ջառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11223մ է:

ԳԵՂԱՇԵՆ – ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ԳԵՂԱՇԵՆ – ԳԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Գեղաշեն, Գառնի գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 4214մ, հասնում 3139.4մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սկզբում ջրբաժանով, հետո ջրհավաքով հատելով դաշտային ճանապարհը, անցնում 2409մ, հասնում է 2756մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 783մ, հասնում 2651.6մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 869մ, հասնում է 2566մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, 2486մ նիշ ունեցող թիվ 11 սահմանակետով անցնում 1312մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով 304մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք և, անցնելով 158մ, հասնում է Գեղաշեն, Գառնի և Կամարիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10049մ է:

ԳԵՂԱՇԵՆ – ԿԱՍԱՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Գեղաշեն, Գառնի և Կամարիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, առվով, թիվ 1-25 սահմանակետերով անցնում 5498մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 27-29 սահմանակետերով անցնում 1384մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 31 սահմանակետով անցնում 1433մ, հասնում

է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 573մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, ապա առվով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 598մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 35-36 սահմանակետերով 950մ, հասնում է թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 134մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, առվով, թիվ 39-46 սահմանակետերով անցնում 1707մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով թիվ 48 սահմանակետով 285մ, հասնում է թիվ 49 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, հատելով Գեղաշեն-Չովք միջհամայնքային ճանապարհը, անցնելով թիվ 50 սահմանակետով 1281մ, հասնում է թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, հատելով Գեղաշեն- Կամարիս միջհամայնքային ճանապարհը, անցնում է թիվ 52-53 սահմանակետերով 1367մ, հասնում թիվ 54 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 316մ, հասնում է թիվ 55 սահմանակետին, ապա շարունակվելով նույն ուղղությամբ, հատում է ձորը և, անցնելով 535մ, հասնում է թիվ 56 սահմանակետին: Թիվ 56 սահմանակետից սահմանագիծը լեռնաշղթայով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով թիվ 57 սահմանակետով 1087մ, հասնում է թիվ 58 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով 604մ, հասնում է թիվ 59 սահմանակետին: Թիվ 59 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 226մ, հասնում է թիվ 60 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ և, անցնելով 391մ, հասնում է ձորի եզրին գտնվող Գեղաշեն, Չառ և Կամարիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18371մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գեղարդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավից և արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գողթ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով՝ Գառնի գյուղական համայնքին:

ԳԵՂԱՐԴ – ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ԳԵՂԱՐԴ – ԳՈՂԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Գեղարդ, Գողթ գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1268մ, հասնում է 3312մ նիշ ունեցող Նազար սարի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորակով, թիվ 9-12 սահմանակետերով անցնում 1460մ, հասնում 3051մ նիշ ունեցող ձորակների հատման տեղում գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ուղիղ գծով անցնում 2692մ, հասնում 3033.2մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 1105մ, հասնում է 2906մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, շարունակվելով հարավարևելյան ուղղությամբ և անցնելով 16-20 սահմանակետերով 3284մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը ուղղվում է հարավարևմտյան ուղղությամբ և, անցնելով առվով 8481մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և, միջգյուղյա ճանապարհով, թիվ 23 սահմանակետով անցնելով 1148մ, հասնում է թիվ 24

սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը ուղղվում է հյուսիս-արևմուտք, անցնում 548մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թեք լանջով, առվով անցնելով 975մ, հասնում է Գեղարդ, Գառնի և Գողթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20961մ է:

ԳԵՂԱՐԴ - ԳԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»

Ժայռի եզրին գտնվող Գեղարդ, Գառնի գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Կանաչ լիճը, անցնելով ջրբաժանով, թիվ 1-3 սահմանակետերով 1487մ, հասնում է 3530.2մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև շարունակվելով նույն ուղղությամբ և անցնելով թիվ 5-7 սահմանակետերով 1387մ, հասնում է բլրի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք և, անցնելով 1429մ, հասնում է 3177մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, ձորակով, լանջով, թիվ 10-21 սահմանակետերով անցնելով 4480մ, հասնում է 2788.1մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնելով ձորակով, թիվ 23-27 սահմանակետերով 4470մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և, անցնելով թիվ 29-31 սահմանակետերով 2122մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք և անցնելով թիվ 33 սահմանակետով 1173մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 582մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, առվով, այնուհետև ձորով, թիվ 36-48 սահմանակետերով անցնում 2556մ, հասնում է Գեղարդ, Գառնի և Գողթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19687մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գողթ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Արարատի մարզին, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Գառնի գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Գեղարդ գյուղական համայնքին:

ԳՈՂԹ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ԳՈՂԹ-ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

ԳՈՂԹ-ԳԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Գողթ, Գառնի և Գեղարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, սեփականաշնորհված խոտհարքների կողքով, ձորով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1263մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, սեփականաշնորհված խոտհարքների կողքով անցնում 2164մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ճանապարհը և գետը, անցնում թիվ 10 սահմանակետով 1403մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ և, անցնելով

301մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 454մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ և, անցնելով 400մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք և, անցնելով թիվ 15 սահմանակետով 722մ, հասնում է Գողթ, Գառնի գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6707մ է:

ԳՈՂԹ – ԳԵՂԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Գողթ, Գեղարդ գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1268մ, հասնում է 3312մ նիշ ունեցող Նազար սարի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորակով, թիվ 9-12 սահմանակետերով անցնում 1460մ, հասնում է 3051մ նիշ ունեցող ձորակների հատման տեղում գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ուղիղ գծով անցնում 2692մ, հասնում է 3033.2մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 1105մ, հասնում է 2906մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, շարունակվելով հարավարևելյան ուղղությամբ և անցնելով թիվ 16-20 սահմանակետերով 3284մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը ուղղվում է հարավարևմտյան ուղղությամբ և անցնելով առվով 8481մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և, միջգյուղյա ճանապարհով, թիվ 23 սահմանակետով անցնելով 1148մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը ուղղվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 548մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թեք լանջով, առվով անցնելով 975մ, հասնում է Գողթ, Գառնի և Գեղարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20961մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՌ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զառ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սևաբերդ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղաշեն գյուղական համայնքին և «Դ»-«Ե» հատվածով՝ Կամարիս գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Ակունք գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Զովաշեն գյուղական համայնքին:

ԶԱՌ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ԶԱՌ – ՍԵՎԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Զառ, Սևաբերդ գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ուղվելով արևմուտք, Կանաչ լճի արևմտյան ափով հատում է դաշտային ճանապարհը, ջրհավաքով և թիվ 1 սահմանակետով անցնում 579մ, հասնում է բլրի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը լճակների հարավային ձորակով թեքվում է դեպի արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում թիվ 3-5 սահմանակետերով 1122մ, հասնում է ճանապարհի և առվակի հատման կետում գտնվող թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում է 472մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 363մ, հասնում է ձորակի սկզբնամասի թիվ 8 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և, ձորակով, թիվ 9-13 սահմանակետերով անցնելով 2609մ, հասնում է ձորակների հատման կետում գտնվող 2715մ նիշ ունեցող թիվ 14 սահմանակետին, որտեղից նույն ձորակով, թիվ 15-16 սահմանակետերով,

ժայռի եզրով անցնում է 3062մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը, շարունակվելով հյուսիսարևելյան ուղղությամբ և անցնելով թիվ 18-19 սահմանակետերով 1001մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվելով արևմտյան ուղղությամբ և անցնելով թիվ 21 սահմանակետով 406մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք և, անցնելով 445մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնելով 130մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք և, անցնելով 287մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, ապա թեքվելով հյուսիս-արևմուտք և անցնելով թիվ 26 սահմանակետով 699մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և, անցնելով թիվ 28 սահմանակետով 952մ, հասնում է թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 141մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 964մ, հասնում է թիվ 31 սահմանակետին, որտեղից էլ թեքվում է հարավ-արևելք, անցնում 425մ, հասնում է բլրի վրա գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 190մ, հասնում է լեռնագագաթի վրա գտնվող թիվ 33 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 34 սահմանակետով անցնում 606մ, հասնում է առվի ափին գտնվող թիվ 35 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևմուտք, այնուհետև հարավ-արևմուտք, ապա հարավ, լեռնաշղթայով, թիվ 36-39 սահմանակետերով անցնում 886մ, հասնում է Ջառ-Սևաբերդ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 148մ, հասնում է թիվ 41 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 42-46 սահմանակետերով անցնում է 1234մ, հասնում թիվ 47 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևելք, թիվ 48-50 սահմանակետերով անցնում է 2147մ, հասնում Ջառ, Սևաբերդ և Գեղաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18869մ է:

ՋԱՌ – ԳԵՂԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Բ»

Ջառ, Գեղաշեն և Կամարիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-18 սահմանակետերով անցնում 2850մ, հասնում է ձորի եզրին

գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնում է 1074մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 487մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Այստեղից թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 493մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 28 սահմանակետով անցնում 184մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 30-34 սահմանակետերով անցնում 2471մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 36 սահմանակետով անցնում 639մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 143մ, հասնում է Չառ, Սևաբերդ և Գեղաշեն համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8342մ է:

ՉԱՌ – ԿԱՄԱՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Չառ, Կամարիս և Գեղաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և, անցնելով 77մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 441մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, ձորով անցնում 205մ, հասնում է Չառ, Կամարիս և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 724մ է:

ՉԱՌ – ԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Չառ, Ակունք և Չովաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 496մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով շարունակվում նույն ուղղությամբ, թիվ 5-13 սահմանակետերով անցնում 2438մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է արևմուտք, անցնում 422մ, հասնում թիվ 15 սահմանակետին,

որտեղից թեքվում է հարավ, հատում Ակունք-Չառ միջհամայնքային ճանապարհը, թիվ 16 սահմանակետով անցնում 1316մ, հասնում փոքր բլրի վրա գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 184մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 234մ, հասնում Չառ, Կամարիս և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Չ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5091մ է:

ՉԱՌ – ՉՈՎԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Չ»-«Ա»

Չառ, Չովաշեն գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 2439մ, հասնում է ճանապարհի ու ձորակի հատման տեղում գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 968մ, հասնում դաշտային ճանապարհի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ջրբաժանով անցնում 1657մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ջրհավաքով անցնում է 656մ, հասնում ձորակների հատման տեղում գտնվող թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով ձորակով և հատելով դաշտային ճանապարհը 3168մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և , ձորով, թիվ 14-20 սահմանակետերով անցնելով 1285մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, անցնում է ձորով, թիվ 22-49 սահմանակետերով 3904մ, հասնում թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով նույն ձորով, թիվ 51-52 սահմանակետերով 308մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և, անցնելով 324մ, հասնում է թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, թիվ 55-66 սահմանակետերով անցնում է 1408մ, հասնում թիվ 67 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով 122մ, հասնում է թիվ 68 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևմուտք, թիվ 69 սահմանակետով անցնելով 1578մ, հատում է դաշտային ճանապարհը, հասնում Չառ-Չովաշեն տանող միջհամայնքային

ճանապարհի եզրին գտնվող թիվ 70 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 70մ, հասնում թիվ 71 սահմանակետին: Թիվ 71 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 72-73 սահմանակետերով և դաշտային ճանապարհով անցնում 1021մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ջառ, Ջովաշեն և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Չ» հանգուցային սահմանակետին:

«Չ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18907մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Զովաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Զովաշեն գյուղական համայնքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Զառ գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ակունք գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Հատիս գյուղական համայնքին:

ԶՈՎԱՇԵՆ – ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանրնկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ԶՈՎԱՇԵՆ – ԶԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Զովաշեն, Զառ գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 2439 մ, հասնում ճանապարհի ու ձորակի հատման տեղում գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 968 մ, հասնում դաշտային ճանապարհի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ջրբաժանով անցնում 1657 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվելով հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ջրհավաքով անցնում 656մ, հասնում է ձորակների հատման տեղում գտնվող թիվ 12 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է ձորակով, հատում դաշտային ճանապարհը, անցնելով 3168մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և թիվ 14-20 սահմանակետերով, ձորով անցնում 1285մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, ձորով, թիվ 22-49 սահմանակետերով անցնում է 3904մ, հասնում 90

թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով նույն ձորում գտնվող թիվ 51-52 սահմանակետերով 308մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 324մ, հասնում է թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, թիվ 55-66 սահմանակետերով անցնելով 1408 մ, հասնում է թիվ 67 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով 122մ, հասնում է թիվ 68 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևմուտք, թիվ 69 սահմանակետով անցնելով 1578մ, հատում է դաշտային ճանապարհը, հասնում Չառ-Չովաշեն տանող միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 70 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 70 մ, հասնում թիվ 71 սահմանակետին: Թիվ 71 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 72-73 սահմանակետերով և դաշտային ճանապարհով անցնում է 1021 մ, հասնում ձորի եզրին գտնվող Չովաշեն, Չառ և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18907մ է:

ՉՈՎԱՇԵՆ – ԱԿՈՒՆԷ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Չովաշեն, Չառ, Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով թիվ 1-2 սահմանակետերով 2337 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվելով հյուսիս-արևելք և անցնելով 267 մ, հասնում է Չովաշեն, Ակունք և Հատիս համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2604մ է:

ՉՈՎԱՇԵՆ – ՀԱՏԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Չովաշեն, Հատիս համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-10 սահմանակետերով անցնելով 3318 մ, հասնում է 2721.6մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է արևելյան ուղղությամբ և, թիվ 12 սահմանակետով անցնելով 780մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք

և, անցնելով թիվ 14-18 սահմանակետերով 2173 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք և, ջրբաժանով, թիվ 20-23 սահմանակետերով անցնելով 1419մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1278մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 593մ, հասնում թիվ 26 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 3139մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, թիվ 28 սահմանակետով անցնում 349մ, հասնում թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 558մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ և, անցնելով թիվ 31 սահմանակետով 568մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 354մ, հասնում թիվ 33 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 34-35 սահմանակետերով անցնում 846մ, հասնում թիվ 36 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1952մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք և, անցնելով 181մ, հասնում է Հատիս-Չովաշեն միջհամայնքային ճանապարհի աջ եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 39-42 սահմանակետերով անցնում 1113 մ, հասնում թիվ 43 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում լանջով և ձորի եզրով 543մ, հասնում է Չովաշեն, Հատիս և Ակունք համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19165մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 8.19
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զովունի գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Եղվարդ քաղաքային համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մրգաշեն գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Քանաքեռավան գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Երևան քաղաքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Քասախ գյուղական համայնքին:

ԶՈՎՈՒՆԻ – ԵՂՎԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Ջրանցքի եզրին գտնվող Զովունի, Քասախ գյուղական և Եղվարդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրանցքի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևելք, ջրանցքով՝ հոսանքին հակառակ, թիվ 1-20 սահմանակետերով անցնում է 2253մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 22-31 սահմանակետերով անցնում 1496մ, հասնում է երկու ձորերի հատման տեղում գտնվող Եղվարդ քաղաքային, Մրգաշեն և Զովունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3749մ է :

ԶՈՎՈՒՆԻ – ՄՐԳԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Երկու ձորերի հատման տեղում գտնվող Մրգաշեն, Զովունի գյուղական և Եղվարդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ, թիվ 1-29 սահմանակետերով անցնում 3115մ, հասնում է երկու ձորերի հատման տեղում գտնվող Մրգաշեն, Զովունի և Քանաքեռավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 311մ է :

ՋՈՎՈՒՆԻ – ՔԱՆԱՔԵՌՈՒՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Երկու ձորերի հատման տեղում գտնվող Ջովունի, Քանաքեռավան և Մրգաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակում, սահմանագիծը ձորակով իջնում է դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 1-29 սահմանակետերով 3805մ, հասնում է Քանաքեռավան, Ջովունի գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3805մ է:

ՋՈՎՈՒՆԻ – ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՋՈՎՈՒՆԻ – ՔԱՍԱԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»

Ջովունի, Քասախ գյուղական և Եղվարդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրանցքի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, ոռոգման խողովակաշարին զուգահեռ թիվ 1-21 սահմանակետերով անցնում 2276մ, հասնում է ՕԿՁ-ի ցանկապատի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ թիվ 23-24 սահմանակետերով, ՕԿՁ-ի ցանկապատով անցնում է 226մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, ասֆալտապատ ճանապարհով, թիվ 26-27 սահմանակետերով անցնում է 550մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, թիվ 29-38 սահմանակետերով անցնում 1040մ, հասնում Քասախ, Ջովունի գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4092մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զորավան գյուղական համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սարալանջ գյուղական համայնքին և «Բ»-«Գ» հատվածով՝ Արագյուղ գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Քարաշամբ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Նոր Գեղի գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Եղվարդ քաղաքային համայնքին, հարավից «Զ»-«Ա» հատվածով՝ Արագածոտնի մարզին:

ԶՈՐԱՎԱՆ – ՄԱՐԱԼԱՆՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Զորավան, Սարալանջ գյուղական համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի արևելք, հատելով ձորակը, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 1762մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 4-7 սահմանակետերով անցնում է 573մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 337մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում է 416մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թիվ 12 սահմանակետով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 283մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, ձորակով, թիվ 14-29 սահմանակետերով անցնում է 1853մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով անցնում է 420մ, հասնում Զորավան, Սարալանջ և Արագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5644մ է:

ՉՈՐԱՎԱՆ – ԱՐԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Չորավան, Արագյուղ և Սարալանջ համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորակով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1378մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում է 128մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 48մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 157մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 45մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ամառանոցների փողոցով անցնում 231մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, ամառանոցների փողոցով անցնում 181մ, հասնում թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, ամառանոցների փողոցով անցնում 269մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, նորից փողոցով անցնում 215մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ամառանոցները եզրափակող փողոցով անցնում 178մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 582մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 446մ, հասնում ձորակում գտնվող թիվ 24 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 904մ, հասնում թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, դաշտամիջյան ճանապարհով անցնում 1277մ, հասնում է դաշտամիջյան ճանապարհների խաչմերուկում գտնվող Արագյուղ, Քարաշամբ և Չորավան համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6039 մ է :

ՉՈՐԱՎԱՆ – ՔԱՐԱՇԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Դաշտամիջյան ճանապարհների խաչմերուկում գտնվող Չորավան, Արագյուղ և Քարաշամբ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 1-7 սահմանակետերով, դաշտամիջյան ճանապարհով անցնում 1106մ, հասնում Չորավան, Քարաշամբ և Նոր Գեղի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1106 մ է :

ՉՈՐԱՎԱՆ – ԱՐԳԵԼ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Չորավան, Քարաշամբ և Արգել համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով, դաշտամիջյան ճանապարհով անցնում 607մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5-9 սահմանակետերով անցնում 1309մ, հասնում դաշտամիջյան ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, թիվ 11 սահմանակետով անցնում 942մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում 556մ, հասնում Չորավան, Արգել և Նոր Գեղի համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3414մ է :

ՉՈՐԱՎԱՆ – ՆՈՐ ԳԵՂԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Չորավան, Նոր Գեղի և Քարաշամբ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով, դաշտային ճանապարհով անցնում 606մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1308մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում թիվ 8 սահմանակետով 942մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում 557մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 462մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 14 սահմանակետով անցնում 617մ, հասնում թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16-19 սահմանակետերով անցնում 1163մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 736մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1336մ, հասնում Նոր Գեղի-Չորավան միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը նորից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, ձորակով, թիվ 23-27 սահմանակետերով անցնում 925մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում

է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 29-31 սահմանակետերով 694մ, հասնում Նոր Գեղի-Եղվարդ մարզային նշանակության ճանապարհի եզրին գտնվող Նոր Գեղի, Չորավան գյուղական և Եղվարդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9349մ է:

ՉՈՐԱՎԱՆ – ԵՂՎԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Չ»

Չորավան գյուղական, Եղվարդ քաղաքային համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Չ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 1432մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնելով թիվ 3 սահմանակետով 1291մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևելք և, անցնելով 183մ, հասնում է ձորակուն գտնվող թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 6-16 սահմանակետերով, ձորակուն անցնում 1329մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 18-22 սահմանակետերով անցնում 864մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 238մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 25-27 սահմանակետերով, դաշտամիջյան ճանապարհով անցնում 1196մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 29-31 սահմանակետերով անցնում 655մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 72մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 48մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 35-39 սահմանակետերով անցնում 546մ, հասնում Եղվարդ-Չորավան ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին, որտեղից սահմանագիծը , շարունակվելով հարավարևելյան ուղղությամբ թիվ 41-51 սահմանակետերով, անցնում է 1346մ, հասնում թիվ 52 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 53-56 սահմանակետերով անցնում 542մ, հասնում է թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 156մ, հասնում է Եղվարդ-Նոր Գեղի ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 58 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ավտոճանապարհով, թիվ 59 սահմանակետով անցնում է 1326մ, հասնում թիվ 60 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք և, անցնելով 138մ, հասնում է Նոր Գեղի - Եղվարդ մարզային նշանակության

ճանապարհի եզրին գտնվող Ջորավան, Նոր Գեղի գյուղական և Եղվարդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Չ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11362մ է :

ՋՈՐԱՎԱՆ – ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Չ»-«Ա»

«Չ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Արագածոտնի մարզերի սահմանների հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թեղենիք գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արզական գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Քարաշամբ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Արագյուղ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Բուժական գյուղական համայնքին:

ԹԵՂԵՆԻՔ - ԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Թեղենիք, Արզական և Բուժական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 818մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3-13 սահմանակետերով անցնում 1042մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 15-22 սահմանակետերով անցնում 787մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 24-28 սահմանակետերով անցնում 501մ, հատելով ձորը, հասնում է թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 30-34 սահմանակետերով 890մ հատելով դաշտային ճանապարհը, հասնում է թիվ 35 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 36-39 սահմանակետերով անցնում 505մ, հասնում է թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 41-46 սահմանակետերով անցնում 464մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 91մ, հասնում է 1450.3 մ նիշ ունեցող թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 49-52 սահմանակետերով անցնում 1248մ, հասնում

է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 2829մ, հասնում 2268մ նիշ ունեցող թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 55 սահմանակետով անցնում 1549մ, հասնում է թիվ 56 սահմանակետին: Թիվ 56 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 57-58 սահմանակետերով անցնում 689մ, հասնում է 2211.4մ նիշ ունեցող բլրի գագաթին տեղադրված «Կիրաշլու» գեոդեզիական կետից 100մ դեպի հարավ գտնվող թիվ 59 սահմանակետին: Թիվ 59 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 60 սահմանակետով անցնում 1897մ, հասնում է 1880.6մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 61 սահմանակետին, որտեղից շարունակվում է նույն ուղղությամբ՝ անցնելով թիվ 62 սահմանակետով 9614մ, հասնում թիվ 63 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 64-68 սահմանակետերով անցնում 2109մ, հատելով Հրազդան-Նոր Գեղի ավտոճանապարհը, հասնում է Հրազդան գետի ափին գտնվող թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 70-75 սահմանակետերով, գետով անցնում 1600մ, հասնում Թեղենիք, Արզական և Քարաշամբ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15433մ է :

ԹԵՂԵՆԻՔ - ՔԱՐԱՇԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Թեղենիք, Քարաշամբ և Արագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Քարաշամբ-Արագյուղ դաշտամիջյան ճանապարհից վերև՝ ձորակի մեջ, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով, լանջով անցնում է 370մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով իջնում 355մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Հրազդան-Նոր Գեղի ավտոճանապարհը, բնակավայրի եզրագծով, թիվ 6-12 սահմանակետերով անցնում է 1330մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 104մ, հասնում է Հրազդան գետի հունում գտնվող Թեղենիք, Քարաշամբ և Արզական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2158մ է:

ԹԵՂԵՆԻՔ - ԱՐԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Թեղենիք, Արագյուղ և Բուժական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, սարահարթային ռելիեֆով թիվ 1 սահմանակետով անցնում 487մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 3 սահմանակետով, լանջով իջնում 188մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում թիվ 5-6 սահմանակետերով 519մ, հասնում է քարափի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, լանջով իջնում 366մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ, իջնում 341մ, հասնում ձորակում գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, ձորակով իջնում 279մ, հասնում է Թեղենիք, Քարաշամբ և Արագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2180մ է:

ԹԵՂԵՆԻՔ - ԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ա»

Բուժական, Թեղենիք և Արգական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 301մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 1869մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա անցնում 393մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը անցնում է 239մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում է 193մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ, թիվ 11 սահմանակետով անցնում 738մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 125մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, լանջով, թիվ 14 սահմանակետով անցնում 517մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 110մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 450մ, հատելով դաշտային ճանապարհը և ձորակը, հասնում է թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 480մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որտեղից անտառային հողերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում 775մ, հասնում

է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 678մ, հատելով ձորակը, հասնում է թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 22 սահմանակետով անցնում 375մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 24 սահմանակետով անցնում 306մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը անտառային հողերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 876մ, հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից, որը գտնվում է 2109մ նիշ ունեցող բլրի գագաթին, սահմանագիծը ջրբաժանով անցնում է դեպի հարավ 554մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, լանջով իջնում 715մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, լանջով իջնում, թիվ 31-32 սահմանակետերով անցնում 319մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 189մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Բուժական, Թեղենիք և Արագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10202մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնանիստ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:
Համայնքը հյուսիս-արևմուտքից, հյուսիսից և արևմուտքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հրազդան քաղաքային համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գեղարքունիքի մարզին, հարավից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Քաղսի գյուղական համայնքին:

ԼԵՌՆԱՆԻՍ – ՀՐԱԶԴԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Լեռնանիստ, Քաղսի գյուղական և Հրազդան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 984մ, հասնում բնակավայրի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, բնակավայրի եզրով, թիվ 3-10 սահմանակետերով անցնում է 964մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից ձորակով, թիվ 12-25 սահմանակետերով անցնում 1665մ, հասնում թիվ 26 սահմանակետին, շարունակվելով նույն ողորոթյամբ, թիվ 27 սահմանակետով անցնում է 914մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 29-30 սահմանակետերով անցնում է 1239մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից նույն ուղորոթյամբ անցնում է 5365մ, հասնում թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 33-34 սահմանակետերով անցնում 1754մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, անցնում 70մ, հասնում թիվ 36 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում է 57մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 38-39 սահմանակետերով անցնում 988մ, հասնում է թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 41-43 սահմանակետերով անցնում 2569մ, հասնում թիվ 44 սահմանակետին, անցնելով 677մ, հասնում է Հրազդան քաղաքային համայնքի, Լեռնանիստ գյուղական համայնքի և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17919մ է:

ԼԵՌՆԱՆԻՍՏ - ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ԼԵՌՆԱՆԻՍՏ – ՔԱՂՍԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»

Լեռնանիստ, Քաղսի գյուղական և Հրազդան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, 2157.3մ նիշ ունեցող բարձունքով անցնում 2909մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 87մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 826մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 580մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 355մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 7-13 սահմանակետերով անցնում 6007մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 15-17 սահմանակետերով անցնում 2407մ, հասնում թիվ 18 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս, անցնում 287մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնելով 1551մ, հասնում է Լեռնանիստ, Քաղսի գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15010մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՍԱՐՁԻ ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կամարիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Կամարիս գյուղական համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ակունք գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Չառ գյուղական համայնքին, արևելքից և հյուսիսից «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղաշեն գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Գառնի գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Գեղաղիր գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Չովք գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Արամուս գյուղական համայնքին և հյուսիս-արևմուտքից «Ը»-«Ա» հատվածով՝ Կաթնաղբյուր գյուղական համայնքին:

ԿԱՄԱՐԻՍ – ԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Կամարիս, Ակունք և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 848մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, այստեղից ձորակով թեքվում է հարավ, ապա արևելք, ձորի ոլորաններով, թիվ 6-16 սահմանակետերով անցնում 1434մ, հասնում է ձորի եզրին գտնվող Կամարիս, Ակունք և Չառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2282մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ՉԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Կամարիս, Չառ և Գեղաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և, անցնելով 77մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք և անցնում 441մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, ձորով անցնում

205մ, հասնում է Կամարիս, Ջառ և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 724մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ԳԵՂԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Կամարիս, Գառնի և Գեղաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, առվով, թիվ 1-25 սահմանակետերով անցնում 5498մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 27-29 սահմանակետերով անցնում 1384մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 31 սահմանակետով անցնում 1433մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 573մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, ապա առվով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 598մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 35-36 սահմանակետերով անցնելով 950մ, հասնում է թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 134մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, առվով, թիվ 39-46 սահմանակետերով անցնում 1707մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 48 սահմանակետով անցնելով 285մ, հասնում է թիվ 49 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, հատելով Գեղաշեն-Չովք միջհամայնքային ճանապարհը, անցնելով թիվ 50 սահմանակետով 1281մ, հասնում է թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, հատելով Գեղաշեն-Կամարիս միջհամայնքային ճանապարհը, անցնում է թիվ 52-53 սահմանակետերով 1367մ, հասնում է թիվ 54 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 316մ, հասնում է թիվ 55 սահմանակետին, ապա շարունակվելով մույն ուղղությամբ, հատում է ձորը և, անցնելով 535մ, հասնում է թիվ 56 սահմանակետին: Թիվ 56 սահմանակետից սահմանագիծը լեռնաշղթայով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 57 սահմանակետով անցնելով 1087մ, հասնում է թիվ 58 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով 604մ, հասնում է թիվ 59 սահմանակետին: Թիվ 59 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 226մ, հասնում է թիվ 60 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ և,

անցնելով 391մ, հասնում է ձորի եզրին գտնվող Կամարիս, Ջառ և Գեղաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18371մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ԳԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Կամարիս, Գեղաշեն և Գառնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 50մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 708մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 2146մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հատելով ձորը, թիվ 8 սահմանակետով անցնում է 419մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 156մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 375մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 690մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից բարձունքով թեքվում է դեպի արևելք, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 1291մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, թիվ 17 սահմանակետով անցնում 591մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 19-24 սահմանակետերով անցնում 1669մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 762մ, հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 29-31 սահմանակետերով անցնում 1049մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 33 սահմանակետով անցնում 859մ, ձորով հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 581մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 35 սահմանակետին, որից հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 272մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 248մ, հասնում թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 433մ, հասնում է թիվ 38 սահմանակետին,

դարձյալ թեքվում է հարավ, անցնում 114մ, հասնում է թիվ 39 սահմանակետին, նորից թեքվում հարավ-արևմուտք, անցնում 279մ, հասնում է թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնելով 520մ, հասնում է Կամարիս, Գառնի և Գեղաղիբ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13211 մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ԳԵՂԱՂԻԲ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Կամարիս, Գեղաղիբ և Գառնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 235մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով թիվ 2-3 սահմանակետերով 517մ, հասնում է Կամարիս, Գեղաղիբ և Զովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 753մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ԶՈՎՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

Կամարիս, Զովք և Արամուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում է 556մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է արևելք, անցնում 475մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է թիվ 4-6 սահմանակետերով 1716մ, հասնում է միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում միջհամայնքային ճանապարհը, անցնում 79մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 9-14 սահմանակետերով անցնում 542մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 1032մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 322մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք 237մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է հարավ և, անցնելով թիվ 19-20 սահմանակետերով 669մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, այնուհետև

սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 410մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևելք և հարավ, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 1965մ, հասնում է Կամարիս, Գեղադիր և Ջովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետին:

«Ջ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8004մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ԱՐԱՄՈՒՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»

Կամարիս, Արամուս և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 288մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք 182մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում միջհամայնքային ճանապարհը, անցնում 367մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք 430մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է թիվ 5 սահմանակետով 1920մ, հասնում է Կամարիս, Ջովք և Արամուս համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3188մ է:

ԿԱՄԱՐԻՍ – ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Կամարիս, Ակունք և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 36մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 2-4 սահմանակետերով 1619մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը հատում է դաշտային ճանապարհը, շարունակվելով հարավարևմտյան ուղղությամբ, անցնում է թիվ 6 սահմանակետով 708մ, հասնում Կամարիս, Արամուս և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2363մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հանքավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լոռու մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արտավազ գյուղական համայնքին և «Գ»-«Դ» հատվածով՝ Մեղրաձոր գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Դ»-«Ա» հատվածով՝ Արագածոտնի մարզին:

ՀԱՆՔԱՎԱՆ-ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Կոտայքի և Լոռու մարզերի սահմանների հետ:

ՀԱՆՔԱՎԱՆ – ԱՐՏԱՎԱԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Հանքավան, Արտավազ գյուղական համայնքների և Լոռու մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում 4306մ, հասնում է ձորակների հատման կետում գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 296մ, հասնում Ուզունչայ գետի ափին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 931մ և, հատելով առուն, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 217մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 740մ և, հատելով դաշտային ճանապարհները, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 257մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 997մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք,

հատում առում և, անցնելով 901մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 121մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 645մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում ձորով, գետով 125մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 413մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 208մ, հասնում ճանապարհի մոտ գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 238մ, հասնում է ջրբաժանի մոտ գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 288մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 236մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում թիվ 18 սահմանակետով 123մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անտառի եզրով անցնում 420մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 327մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հարավ-արևելք, անցնում թիվ 22 սահմանակետով 527մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 137մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 230մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 273մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով անցնում 208մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը նորից անտառի եզրով թեքվում է դեպի արևելք, անցնում 257մ, հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով անցնում 84մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 136մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 31-34 սահմանակետերով անցնում 561մ, հասնում է թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 66մ, հասնում է թիվ 36 սահմանակետին: Թիվ 36

սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում թիվ 37-38 սահմանակետերով 363մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում թիվ 40 սահմանակետով 295մ, հասնում անտառի եզրի թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 137մ, հասնում է թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 43 սահմանակետով անցնում 934մ, հասնում անտառի եզրի թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 45 սահմանակետով անցնում 904մ, հասնում է թիվ 46 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք և, հատելով առուն ու դաշտային ճանապարհը, անցնում թիվ 47 սահմանակետով 1328մ, հասնում է թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 801մ, հասնում է Հանքավան, Արտավազ և Մեղրաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19032մ է:

ՀԱՆՔԱՎԱՆ – ՄԵՂՐԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Բ»

Հանքավան, Մեղրաձոր և Արտավազ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 710մ, հասնում Մեղրաձոր, Հանքավան գյուղական համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 710մ է:

ՀԱՆՔԱՎԱՆ – ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Ա»

«Բ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Արագածոտնի մարզերի սահմանների հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հատիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ֆանտան գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գեղարքունիքի մարզին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ջովաշեն գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Ակունք գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Կապուտան գյուղական համայնքին:

ՀԱՏԻՍ – ՖԱՆՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Հատիս, Ֆանտան և Կապուտան համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով, ջրբաժանով անցնում 1331մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 633մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 8-20 սահմանակետերով անցնում 2914մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 272մ, հասնում թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, թիվ 25 սահմանակետով անցնում 170 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 273մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևելք, թիվ 29 սահմանակետով անցնում 199մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 31 սահմանակետով անցնում 313 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 33-39 սահմանակետերով անցնում 1089մ, հասնում թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևելք, թիվ 41 սահմանակետով անցնում 902մ, հասնում է թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 342մ, հասնում թիվ 43 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 44 սահմանակետով անցնում 996մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևելք

և հարավ-արևելք, թիվ 46-50 սահմանակետերով անցնում 1015մ, հասնում է թիվ 51 սահմանակետին, այնուհետև բլրակներով թեքվում է հարավ-արևելք, թիվ 52-66 սահմանակետերով անցնում 2041 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 68-69 սահմանակետերով անցնում 459մ, հասնում թիվ 70 սահմանակետին: Թիվ 70 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, թիվ 71 սահմանակետով անցնում 900մ, հասնում թիվ 72 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 73 սահմանակետով անցնում 430մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 74 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 381մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 75 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 76-83 սահմանակետերով անցնում 741մ, հասնում թիվ 84 սահմանակետին: Թիվ 84 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 450մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 85 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 86-87 սահմանակետերով անցնում 187մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 88 սահմանակետին: Թիվ 88 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 89-99 սահմանակետերով անցնում 887մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 100 սահմանակետին: Թիվ 100 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է արևելք, թիվ 101-103 սահմանակետերով անցնում 689մ, հասնում թիվ 104 սահմանակետին, ապա բարձունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 104-107 սահմանակետերով անցնում 1280մ, հասնում թիվ 108 սահմանակետին: Թիվ 108 սահմանակետից սահմանագիծը բլրակներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 109-112 սահմանակետերով անցնում 1758մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 113 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի արևելք, թիվ 114-116 սահմանակետերով անցնում 1455մ, հասնում Հատիս, Ֆանտան գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22103 մ է:

ՀԱՏԻՍ – ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանրնկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ՀԱՏԻՍ – ՉՈՎԱԾԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Հատիս, Չովաշեն գյուղական համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 3318մ, հասնում 2721.6մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է արևելյան ուղղությամբ և, անցնելով թիվ 12 սահմանակետով 780մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և, անցնելով թիվ 14-18 սահմանակետերով 2173մ, հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք և, անցնելով ջրբաժանով, թիվ 20-23 սահմանակետերով 1419մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1278մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 593մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 3139մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, թիվ 28 սահմանակետով անցնում 349մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 558մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ և , անցնելով թիվ 31 սահմանակետով 568մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 354մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 34-35 սահմանակետերով անցնում 846մ, հասնում թիվ 36 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1952մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք և, անցնելով 181մ, հասնում է Հատիս-Չովաշեն միջհամայնքային ճանապարհի աջ եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 39-42 սահմանակետերով անցնում 1113մ, հասնում է թիվ 43 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում լանջով, ձորի եզրով 543մ, հասնում Հատիս, Չովաշեն և Ակունք համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային կետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19165մ է:

ՀԱՏԻՍ – ԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Հատիս, Կապուտան և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բարձրանում լանջով, անցնելով թիվ 1-2 սահմանակետերով 1282մ, հասնում է Հատիս, Ակունք և Ջովաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային կետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1282մ է:

ՀԱՏԻՍ – ԿԱՊՈՒՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»

Հատիս, Ֆանտան և Կապուտան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1033մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որը գտնվում է Հատիս-Կապուտան միջհամայնքային ճանապարհի եզրին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 267մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում թիվ 3-7 սահմանակետերով 1002մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 2119մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 12-13 սահմանակետերով անցնելով 1468մ, հասնում է Հատիս, Կապուտան և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5889մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հացավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա» - «Բ» հատվածով սահմանակից է Ողջաբերդ համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Գեղաղիբ համայնքին, արևելքից «Գ» - «Դ» հատվածով՝ Գառնի համայնքին, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Արարատի մարզին, հյուսիս-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Երևան քաղաքին:

ՀԱՅԱՎԱՆ – ՈՂՋԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Հացավան, Ողջաբերդ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բլրի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 309մ, հասնում է Ողջաբերդ, Գեղաղիբ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 309մ է:

ՀԱՅԱՎԱՆ – ԳԵՂԱՂԻՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Հացավան, Գեղաղիբ և Ողջաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լեռնաշղթայով անցնելով 314մ, հասնում է սարի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, առվով անցնելով 322մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով ճանապարհով 461մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, լեռան լանջով, թիվ 4-6 սահմանակետերով անցնելով 566մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, բարձրանում լեռան գագաթը, անցնում 444մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով, թիվ 9-15 սահմանակետերով անցնում է 1139մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա

թեքվում է դեպի հարավ-արևելք, սարի լանջով, առվով անցնելով 582մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, թիվ 18-23 սահմանակետերով անցնում է 1708մ, հասնում թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, ճանապարհով, թիվ 25-31 սահմանակետերով անցնում 1176մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 419մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լեռան լանջով, թիվ 34-35 սահմանակետերով անցնելով 824մ, հասնում է Հացավան, Գեղաղիբ և Գառնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7955մ է :

ՀԱՑԱՎԱՆ – ԳԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Հացավան, Գառնի և Գեղաղիբ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնելով թիվ 1-2 սահմանակետերով 795մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 4-6 սահմանակետերով, ձորով անցնում 1088մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, նորից հարավ, թիվ 8-11 սահմանակետերով անցնելով 953մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորով անցնում 650մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 650մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 596մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, անցնում թիվ 15 սահմանակետով 248մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 1122մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, առվով, թիվ 21-27 սահմանակետերով անցնում 1361մ, հասնում է Հացավան, Գառնի գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6813մ է :

ՀԱՅԱՎԱՆ – ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

ՀԱՅԱՎԱՆ – ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»

«Ե»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ձորաղբյուր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արամուս գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Չովքի գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ողջաբերդ գյուղական համայնքին և «Դ»-«Ե» հատվածով՝ Ջրվեժ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Երևան քաղաքին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Ջրվեժ գյուղական համայնքին, հյուսիսից «Է»-«Ը» հատվածով՝ Առինջ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Ը»-«Ա» հատվածով՝ Մայակովսկի գյուղական համայնքին:

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ - ԱՐԱՄՈՒՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Ձորաղբյուր, Արամուս և Մայակովսկի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 484մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 3-7 սահմանակետերով անցնում 1138մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, վարելահողերի եզրագծով, բարձունքով, թիվ 9-14 սահմանակետերով անցնում 1642մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում Ձորաղբյուր, Արամուս և Չովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3264մ է:

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ- ՉՈՎՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Ձորաղբյուր, Արամուս և Չովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը վարելահողերի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ-արևմուտք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 887մ, հատելով Երևան-Չովք հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում է դաշտային

ճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում է 2325մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից վարելահողերի եզրագծով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ, թիվ 12-16 սահմանակետերով անցնում 790մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, հյուսիս-արևելք և հարավ, թիվ 19-46 սահմանակետերով անցնում 4275մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վարելահողերի եզրագծով անցնում 655մ, հասնում Չորաղբյուր, Չովք և Ողջաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6839մ է:

ՉՈՐԱՂԲՅՈՒՐ – ՈՂՋԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Չորաղբյուր, Ողջաբերդ և Չովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1366մ, հասնում թիվ 9 սահմանակետին, կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 120մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11-13 սահմանակետերով անցնում 734մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, կրկին հյուսիս-արևելք, թիվ 15-20 սահմանակետերով անցնում 947մ, հասնում թիվ 21 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում թիվ 22 սահմանակետով 157մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը դարձյալ դաշտային ճանապարհով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 971մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 370մ, հասնում է Չորաղբյուր, Ողջաբերդ և Չովք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4625մ է:

ՉՈՐԱՂԲՅՈՒՐ – ՋՐՎԵԺ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Չորաղբյուր, Ջրվեժ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 444մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա առվով թեքվում է հյուսիս-արևելք, արևելք և հարավ-արևելք, թիվ 5-38 սահմանակետերով անցնում 3791մ, հասնում է Ջրվեժ, Չորաղբյուր, Ողջաբերդ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4235մ է:

ՉՈՐԱՂԲՅՈՒՐ – ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ձ»

«Ե»-«Ձ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի մարզի և Երևան քաղաքի սահմանների հետ:

ՉՈՐԱՂԲՅՈՒՐ – ՋՐՎԵՅ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ» - «Է»

Չորաղբյուր, Ջրվեժ և Առինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 312մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ճանապարհով թեքվում հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 667մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, բլրակներով թեքվում հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 6-10 սահմանակետերով անցնում 1006մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Ջրվեժ բնակավայրի սահմանով սահմանագիծը թեքվում է արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 12-17 սահմանակետերով անցնում 598մ, հասնում է Չորաղբյուր, Ջրվեժ գյուղական համայնքների և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 25837մ է:

ՉՈՐԱՂԲՅՈՒՐ – ԱՌԻՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Ը»

Չորաղբյուր, Ջրվեժ և Առինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրանցքով թեքվում է դեպի հյուսիս-

արևելք, ապա արևելք, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 1220մ, հասնում է Չորաղբյուր, Առինջ և Մայակովսկի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12206մ է:

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ –ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՄԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը» - «Ա»

Չորաղբյուր, Մայակովսկի և Արամուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրանցքի հոսանքին հակառակ ուղղությամբ թիվ 1-26 սահմանակետերով անցնում 3544.77մ, հասնում Չորաղբյուր, Մայակովսկի և Առինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3544.77 մ է :

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՍԱՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մարմարիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Աղավնաձոր գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Բջնի գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Արզական քաղաքային համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Մեղրաձոր գյուղական համայնքին:

ՄԱՐՍԱՐԻԿ-ԱՂԱՎՆԱՉՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Մարմարիկ, Մեղրաձոր և Աղավնաձոր գյուղական համայնքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1001մ, հասնում 2169.6 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով, ջրբաժանով անցնում 941մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 362մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 5-6 սահմանակետերով անցնում 396մ, հասնում Հրազդան-Մեղրաձոր միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում 489մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գյուղի եզրագծով, թիվ 12-13 սահմանակետերով անցնում 681մ, հատելով Մարմարիկ գետը, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 152մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 16-19 սահմանակետերով անցնում 904մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 174մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 22-36 սահմանակետերով անցնում 1758մ, հասնում է թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 38-53

սահմանակետերով անցնում 3397մ, հասնում է Մարմարիկ, Աղավնաձոր և Բջնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10255մ է:

ՄԱՐՄԱՐԻԿ-ԲԶՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Մարմարիկ, Բջնի և Արզական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 590մ, հասնում է Մարմարիկ, Բջնի և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 590մ է:

ՄԱՐՄԱՐԻԿ-ԱՐԶԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Մարմարիկ, Արզական և Բջնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1815մ, հասնում լեռան զագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով և բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-16 սահմանակետերով անցնում 2738մ, հասնում է 2787.5մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող Մարմարիկ, Արզական և Մեղրաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4553մ է:

ՄԱՐՄԱՐԻԿ-ՄԵՂՐԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Մեղրաձոր, Մարմարիկ և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1372մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, թեքվում արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 308մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 470մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 251մ, հասնում

թիվ 13 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս, ապա արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 311մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16 սահմանակետով անցնում 822մ, հասնում 2686.8մ նիշ ունեցող լեռան լանջին գտնվող թիվ 17 սահմանակետին, որտեղից լեռան լանջերով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 18-21 սահմանակետերով անցնում 1403մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը լանջի հորիզոնականների ուղղությամբ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 153մ, հասնում 2095.2մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 124մ, հասնում թիվ 24 սահմանակետին, այնուհետև լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 25-29 սահմանակետերով անցնում 963մ, հատելով ձորը, դաշտային ճանապարհը, հասնում է թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թիվ 31-33 սահմանակետերով անցնում է 424մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը անտառով թեքվում է հյուսիս, անցնում 196մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 36-39 սահմանակետերով անցնում է 912մ, հատելով ձորը, ձորակը և դաշտային ճանապարհները, հասնում լեռան լանջի վրա գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 41-42 սահմանակետերով անցնում 1311.0մ, հասնում է թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 44 սահմանակետով անցնում է 632մ, հասնում թիվ 45 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 46 սահմանակետով անցնում 783մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրագծով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 48-52 սահմանակետերով անցնում 953մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 54-60 սահմանակետերով անցնում 820մ, հասնում է թիվ 61 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 75մ, հասնում է թիվ 62 սահմանակետին: Թիվ 62 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 63-85 սահմանակետերով անցնում է 1935մ, հասնում Մեղրաձոր, Մարմարիկ և Արզական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Չ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14220մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մեղրաձոր գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լոռու մարզին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Տավուշի մարզին, «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղարքունիքի մարզին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հրազդան քաղաքային համայնքին, հարավ-արևելքից «Ե»-«Զ» հատվածով՝ Աղավնաձոր գյուղական համայնքին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Մարմարիկ գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Արզական գյուղական համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Արագածոտնի մարզին, «Թ»-«Ժ» հատվածով՝ Հանքավան գյուղական համայնքին և «Ժ»-«Ա» հատվածով՝ Արտավազ գյուղական համայնքին:

ՄԵՂՐԱԶՈՐ – ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Լոռու մարզերի սահմանների հետ:

ՄԵՂՐԱԶՈՐ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՄԵՂՐԱԶՈՐ – ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանների հետ:

ՄԵՂՐԱՃՈՐ – ՀՐԱԶԳԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Մեղրաձոր, Աղավնաձոր գյուղական և Հրազդան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 960մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 682մ, հասնում Կյումուրլու գետի ափին գտնվող թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1063մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով Խուրաձոր գետը, թիվ 7 սահմանակետով անցնում է 653մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 786մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 956մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է արևելք, հատելով Կյումուրլու գետը, անցնում է 1273մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, կրկին հատելով գետը, անցնում 369մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, հատում գետը, անցնում 532մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 15 սահմանակետով անցնում 878մ, հասնում 2421.2մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 17-18 սահմանակետերով անցնում 1581մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 20 սահմանակետով անցնում 1202մ, հասնում 2614.3մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Մեղրաձոր գյուղական, Հրազդան քաղաքային համայնքների և Գեղարքունիքի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10935մ է:

ՄԵՂՐԱՃՈՐ – ԱՂԱՎՆԱՃՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Մեղրաձոր, Աղավնաձոր և Մարմարիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 846մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, թիվ 4 սահմանակետով անցնում 549մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6-8 սահմանակետերով

անցնում 2217մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում է Մեղրաձոր, Աղավնաձոր գյուղական և Հրազդան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Չ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3612 մ է:

ՄԵՂՐԱՁՈՐ – ՄԱՐՄԱՐԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Չ»-«Է»

Մեղրաձոր, Մարմարիկ և Աղավնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Չ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1372մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 308մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 470մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 251մ, հասնում թիվ 13 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս, ապա արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 311մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16 սահմանակետով անցնում է 822մ, հասնում 2686.8մ նիշ ունեցող լեռան լանջին գտնվող թիվ 17 սահմանակետին, որտեղից լեռան լանջերով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 18-21 սահմանակետերով անցնում 1403մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը լանջի հորիզոնականների ուղղությամբ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 153մ, հասնում է 2095.2մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 124մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, այնուհետև լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 25-29 սահմանակետերով անցնում 963մ, հատելով ձորը, դաշտային ճանապարհը, հասնում է թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թիվ 31-33 սահմանակետերով անցնում է 424մ և հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը անտառով թեքվում է հյուսիս, անցնում 196մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 36-39 սահմանակետերով անցնում է 912մ, հատելով ձորը, ձորակը և դաշտային ճանապարհները, հասնում է լեռան լանջին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 41-42 սահմանակետերով անցնում է 1311մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 44

սահմանակետով անցնում 632մ, հասնում է թիվ 45 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 46 սահմանակետով անցնում 783մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրագծով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 48-52 սահմանակետերով անցնում 953մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 54-60 սահմանակետերով անցնում 820մ, հասնում է թիվ 61 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 75մ, հասնում է թիվ 62 սահմանակետին: Թիվ 62 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 63-85 սահմանակետերով անցնում 1935մ, հասնում Մեղրաձոր, Մարմարիկ և Արզական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14220մ է:

ՄԵՂՐԱՁՈՐ – ԱՐԶԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»

Մեղրաձոր, Մարմարիկ և Արզական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1-21 սահմանակետերով անցնում 4667մ, հասնում է Մեղրաձոր, Արզական գյուղական համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4667մ է:

ՄԵՂՐԱՁՈՐ – ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»

«Ը»-«Թ» հատվածով սահմանագիծը համընկնում է Կոտայքի և Արագածոտնի մարզերի սահմանների հետ:

ՄԵՂՐԱՁՈՐ – ՀԱՆՔԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ժ»

Մեղրաձոր, Հանքավան և Արտավազ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 710մ, հասնում է Մեղրաձոր, Հանքավան և Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

Լեռնակերտ, Սառնաղբյուր և Ձորակապ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևելք, հատելով ձորակը, թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 1497մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևելք, թիվ 5 սահմանակետով անցնելով 718մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ձորով նույն ուղղությամբ թիվ 7-13 սահմանակետերով անցնելով 929մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ թիվ 15-18 սահմանակետերով անցնելով 1850մ, հասնում է սարի գագաթին գտնվող 2225մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 19 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ թիվ 20-23 սահմանակետերով անցնելով 2268մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը, շարունակվելով հարավարևելյան ուղղությամբ, ձորով, թիվ 25-42 սահմանակետերով անցնելով 1736մ, հասնում է թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 129մ, հասնում է թիվ 44 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 494մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 226մ, հասնում է թիվ 46 սահմանակետին, որտեղից սահմանագիծը, ձորով անցնելով հարավ-արևելք, հատում է դաշտային ճանապարհները 5516մ, հասնում է ձորի եզրին գտնվող Լեռնակերտ,

Սառնաղբյուր և Հառիճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15363մ է:

ԼԵՌՆԱԿԵՐՏ – ՁՈՐԱԿԱՊ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Լեռնակերտ, Պենգաշեն և Ձորակապ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնելով 655մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այդտեղից թեքվելով հարավ, անցնելով 484մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևելք, թիվ 4 -5 սահմանակետերով անցնելով 705մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այս թեքվելով հարավ-արևմուտք, հատելով դաշտամիջյան ճանապարհը, թիվ 7-8 սահմանակետերով անցնելով 1203մ, հասնում է Լեռնակերտ, Սառնաղբյուր և Ձորակապ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3047մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Լուսաղբյուր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շիրակավան գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գուսանագյուղ գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Հոռոմ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Մարալիկ քաղաքային համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Իսահակյան գյուղական համայնքին:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ - ՇԻՐԱԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Լուսաղբյուր, Շիրակավան և Իսահակյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևմուտք, անցնելով 369մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այդտեղից թեքվելով դեպի հյուսիս-արևելք, անցնելով 273մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, թեքվելով արևելք, անցնելով 240մ, հասնում է Ախուրյանի ջրամբարի ափին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, անցնելով թիվ 4 սահմանակետով 776մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում է թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի արևելք, անցնելով 362մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողերի և ձորակի հատման տեղում գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևելք, հատելով Արմավիր-Գյումրի խճուղին, անցնելով թիվ 7-12 սահմանակետերով 558 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում Արմավիր-Գյումրի երկաթգիծը, սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձերի եզրերով հատելով դաշտային ճանապարհը և Գ-ետքի ջրանցքը, անցնելով թիվ 14-31 սահմանակետերով 3138մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողի եզրին գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևելք, անցնելով 339մ, հասնում է բլրի զագաթին գտնվող թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ, անցնելով 190մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, այնուհետև

թեքվելով արևելք, անցնելով թիվ 35 սահմանակետով 467մ, հասնում է թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, անցնելով թիվ 37 սահմանակետով 221մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, ապա թեքվելով հարավ-արևելք, անցնելով թիվ 39 սահմանակետով 263մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով թիվ 41 սահմանակետով 455մ, հասնում է Լուսաղբյուր, Շիրակավան և Գուսանագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7652մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ - ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Լուսաղբյուր, Շիրակավան և Գուսանագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով ձորակով, թիվ 1-18 սահմանակետերով 1471մ, հասնում է Լուսաղբյուր, Գուսանագյուղ և Հոռոմ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1471.0մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ – ՀՈՌՈՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Լուսաղբյուր, Գուսանագյուղ և Հոռոմ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևմուտք, ձորակից դուրս գալով և անցնելով 173մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի հարավ- արևմուտք, անցնելով թիվ 2–4 սահմանակետերով 1533մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը, դաշտային ճանապարհով, թիվ 6-28 սահմանակետերով դեպի հարավ-արևելք անցնելով 1882մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լուսաղբյուր, Հոռոմ գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3588մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ - ՄԱՐԱԼԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Ե»

Դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լուսաղբյուր, Հոռոմ գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնելով 304 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, սեփականաշնորհված վարելահողերի եզրերով, թիվ 3 սահմանակետով անցնելով 859մ, հասնում սեփականաշնորհված վարելահողերի եզրերին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի հարավ-արևմուտք, սեփականաշնորհված վարելահողերի եզրերով անցնելով 577մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 6 սահմանակետով անցնելով 262մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով 545մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողերի եզրերին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով 353մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ-արևելք և անցնելով 390մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 11 սահմանակետով 1100մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով 1224 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Լուսաղբյուր, Իսահակյան գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5613մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ - ԻՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»

Լուսաղբյուր, Շիրակավան և Իսահակյան համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, հատելով Արմավիր-Գյումրի հանրապետական նշանակության ճանապարհը, անցնելով թիվ 1 սահմանակետով 760մ, հասնում է երկաթգծի և ձորակի հատման տեղում գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի հարավ-արևելք, հատելով Երևան-Գյումրի երկաթգիծը, շարունակվելով ձորակով և անցնելով թիվ 3-35 սահմանակետերով 2566մ, հասնում է ձորակի

եզրին գտնվող թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով 494մ, հասնում է թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 38-40 սահմանակետերով 2307մ, հասնում է ձորի եզրին գտնվող Լուսաղբյուր, Իսահակյան գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6126մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ծաղկուտ համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքի սահմանագիծը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով համընկնում է պետական սահմանին (Վրաստանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով սահմանակից է Ջորալերտ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Բերդաշեն գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Գառնառիճ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով համընկնում է պետական սահմանին (Թուրքիայի Հանրապետություն):

ԾԱՂԿՈՒՏ – ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ԾԱՂԿՈՒՏ - ՋՈՐԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Ծաղկուտ, Ջորալերտ գյուղական համայնքների տարածքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2357.9մ նիշ ունեցող սարի գագաթին, սահմանագիծը, թեքվելով հարավ-արևելք և անցնելով 1750մ, հասնում է 2312.2մ նիշ ունեցող գագաթի թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավարևմտյան ուղղությամբ, անցնելով գագաթների վրայով և թիվ 2-5 սահմանակետերով 3078մ, հասնում է Ծաղկուտ-Ջորալերտ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այդտեղից քիչ թեքվելով և անցնելով թիվ 7-8 սահմանակետերով 3364 մ, հասնում է Ծաղկուտ, Ջորալերտ և Բերդաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8192մ է:

ԾԱՂԿՈՒՏ - ԲԵՐՂԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Ծաղկուտ, Ջորակերտ և Բերդաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի արևմուտք, անցնում է 847մ, հասնում Ծաղկուտ, Բերդաշեն և Գառնառիճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 847 մ է:

ԾԱՂԿՈՒՏ - ԳԱՌՆԱՌԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Եղնաջուր գետակի ափին գտնվող Ծաղկուտ, Գառնառիճ գյուղական համայնքների տարածքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, Եղնաջուր գետակի հոսանքով դեպի հարավ անցնելով 13709մ, հասնում է գետակի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա քիչ թեքվելով արևելյան ուղղությամբ, անցնելով 263մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այդտեղից թեքվելով հարավ-արևելք, անցնելով թիվ 3 սահմանակետով 952մ, հասնում է վարելահողի եզրի թիվ 4 սահմանակետին, ապա սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի արևելք, անցնելով 186մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ-արևելք, հատելով Ծաղկուտ-Գառնառիճ միջհամայնքային ճանապարհը, թիվ 6 սահմանակետով անցնելով 2382մ, հասնում է Ծաղկուտ, Բերդաշեն և Գառնառիճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17492մ է:

ԾԱՂԿՈՒՏ – ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

«Ա»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կաքավասար գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սարապատ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ձորաշեն գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ջաջուռ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Կրաշեն գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Փոքր Սարիար գյուղական համայնքին, հյուսիս - արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Բաշգյուղ գյուղական համայնքին:

ԿԱՔԱՎԱՍԱՐ - ՄԱՐԱՊԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Ձորի եզրին գտնվող Կաքավասար, Սարապատ և Բաշգյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնելով 256մ, հասնում է թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով բարձունքների վրա գտնվող թիվ 2-4 սահմանակետերով 1126մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ 849մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 396մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ 634մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 240մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով դաշտային ճանապարհով, թիվ 9-16 սահմանակետերով 564մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ 513մ, հասնում է թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 179մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 237մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 305մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, թիվ 22-24 սահմանակետերով անցնում 1061մ, հասնում է 2115.2մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 995մ, հատելով Աշոցք-Չորաշեն միջհամայնքային ճանապարհը և Չիչխան գետը, հասնում է Կաքավասար, Սարապատ և Չորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7354մ է:

ԿԱՔԱՎԱՍԱՐ - ՉՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Չիչխան գետի ափին գտնվող Կաքավասար, Սարապատ և Չորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ջրամբարի հողերը, անցնելով թիվ 1 սահմանակետով 136մ, հասնում է ջրբաժանի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 520մ, ջրբաժանով հասնում ձորին, հատում Չիչխան գետի աջակողմյան վտակը, որից հետո լանջով հասնում է անտառի եզրի թիվ 3 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 218մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնտեղից ջրբաժանով անցնելով 349մ, թեքվում է հարավ-արևմուտք, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 6 սահմանակետով 737մ, հատելով դաշտային ճանապարհը և ջրբաժանը, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով 393մ, հատելով ձորը, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 551մ, հատում ձորը, հասնում է ջրբաժանի վրա գտնվող Կաքավասար, Չաջուռ և Չորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2905մ է:

ԿԱՔԱՎԱՍԱՐ - ՉԱՋՈՒՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Ջրբաժանի վրա գտնվող Կաքավասար, Չաջուռ և Չորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է

դեպի արևմուտք, անցնելով 304մ, հասնում է թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 586մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 3-4 սահմանակետերով 1145մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 418մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 473մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով 338մ, հասնում է Կաքավասար, Ջաջուռ և Կրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3265մ է:

ԿԱՔԱՎԱՍԱՐ - ԿՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Կաքավասար, Կրաշեն և Փոքր Սարիար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 219մ, հասնում Կաքավասար, Ջաջուռ և Կրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 219մ է:

ԿԱՔԱՎԱՍԱՐ - ՓՈՔՐ ՍԱՐԻԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Չորերի հատման տեղում գտնվող Կաքավասար, Փոքր Սարիար և Բաշգյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, հատում է դաշտային ճանապարհները, ձորով անցնելով 2074մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը, ջրբաժանով անցնելով հարավ-արևմուտք, թիվ 2-3 սահմանակետերով 578.0մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա քիչ թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով 203մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որից հետո թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով 310մ, հասնում է գազաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը, քիչ թեքվելով հարավ-արևելք, անցնելով 251մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այդտեղից ուղղվելով դեպի հարավ, հատելով Չիխսան գետը, ապա Աշոցք-Չորաշեն միջհամայնքային ճանապարհը, անցնելով 527մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որից հետո սահմանագիծը, անցնելով 51մ, հասնում է Թովարջուր գետի ափին գտնվող թիվ 8 սահմանակետին,

այնուհետև սահմանագիծը, Թովարջուր գետով անցնելով դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-65 սահմանակետերով 2778մ, հասնում է թիվ 66 սահմանակետին, ապա լանջով նույն ուղղությամբ թիվ 67 սահմանակետով անցնելով 988մ, հասնում է Փոքր Սարիար, Կրաշեն և Կաքավասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Չ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7971մ է:

ԿԱԶԱՎԱՍԱՐ - ԲԱԾԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Չ» - «Ա»

Չորի եզրին գտնվող Կաքավասար, Բաշգյուղ և Սարապատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնելով ձորով 2186մ, հասնում է ձորի եզրին գտնվող Կաքավասար, Բաշգյուղ և Փոքր Սարիար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Չ» հանգուցային սահմանակետին:

«Չ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2186մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿՐԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կրասար գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Մեծ Սեպասար գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Աշոցք գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Կարմրավան համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հովտուն գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Ամասիա գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Ալվար գյուղական համայնքին, հյուսիս արևմուտքից «Է» - «Ա» հատվածով՝ Փոքր Սեպասար գյուղական համայնքին:

ԿՐԱՍԱՐ – ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Կրասար, Փոքր Սեպասար և Մեծ Սեպասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ախուրյան և Աշոցք գետերի հատման տեղում, սահմանագիծը ուղղվում է դեպի հյուսիս, այնուհետև արևելք, գետով, թիվ 1-31 սահմանակետերով անցնելով 2108մ, հասնում է Աշոցք գետի եզրին գտնվող Կրասար, Աշոցք և Մեծ Սեպասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2108մ է:

ԿՐԱՍԱՐ - ԱՇՈՑՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Կրասար, Աշոցք և Մեծ Սեպասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Աշոցք գետի եզրին, սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ, անցնելով թիվ 1 սահմանակետով 103մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրի թիվ 2 սահմանակետին, որից հետո նույն ուղղությամբ դաշտային ճանապարհով, թիվ 3-12 սահմանակետերով անցնելով 773մ, հասնում է Աշոցք-Կրասար միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին, այնուհետև հատելով միջհամայնքային ճանապարհը, դաշտային ճանապարհով հարավարևելյան ուղղությամբ թիվ

13-18 սահմանակետերով անցնելով 834մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը, փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 20 սահմանակետով 302մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 22 սահմանակետով 765մ, հասնում է Աշոցք գետի աջափնյա վտակի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև հատելով վտակը և դաշտային ճանապարհը, թիվ 24 սահմանակետով 346մ անցնելով հարավ-արևմուտք, հասնում է թիվ 25 սահմանակետին, որից հետո քիչ թեքվելով հարավ, անցնելով թիվ 26-27 սահմանակետերով 617մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից անցնելով նույն ուղղությամբ 258մ, հասնում է սարի գագաթին գտնվող Կրասար, Աշոցք և Կարմրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3397մ է:

ԿՐԱՍԱՐ – ԿԱՐՄՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Կրասար, Աշոցք և Կարմրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 1 սահմանակետով 883մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից ձորով թեքվելով դեպի հարավ, անցնելով թիվ 3-5 սահմանակետերով 696մ, հասնում է լանջի ստորոտին գտնվող թիվ 6 սահմանակետին, շարունակվելով նույն ուղղությամբ, լանջով անցնելով 868մ, հասնում է Կրասար, Կարմրավան և Հովտուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2447մ է:

ԿՐԱՍԱՐ - ՀՈՎՏՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Ախուրյան գետի ափին գտնվող Ամասիա, Կրասար և Հովտուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, անցնելով բարձունքների վրայով, թիվ 1-2 սահմանակետերով, հատում է դաշտային ճանապարհը, ապա թիվ 3-7 սահմանակետերով անցնում 2327մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, որից հետո թեքվելով դեպի հյուսիս-արևելք, հատելով ճանապարհը, անցնելով 150մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև փոխելով ուղղությունը դեպի արևելք, թիվ 10 սահմանակետով անցնելով 721մ,

հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը լանջի վրայով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12-15 սահմանակետերով անցնելով 1571մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք և, բլուրների զագաթներով, թիվ 17-20 սահմանակետերով անցնելով 1582մ, հասնում է Կրասար, Կարմրավան և Հովտուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6351մ է:

ԿՐԱՍԱՐ - ԱՄԱՍԻԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Ախուրյան գետի եզրին գտնվող Կրասար, Ամասիա և Ալվար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, Ախուրյան գետով հարավարևելյան ուղղությամբ անցնելով 2269մ, հասնում է Ամասիա, Կրասար և Հովտուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2269 մ է:

ԿՐԱՍԱՐ - ԱԼՎԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Է»

Կրասար, Ալվար և Փոքր Սեպասար համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, Ախուրյան գետով դեպի հարավ իջնելով 2157մ, հասնում է Ախուրյան գետի ափին գտնվող Կրասար, Ամասիա և Ալվար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2157 մ է:

ԿՐԱՍԱՐ - ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Ա»

Կրասար, Փոքր Սեպասար և Մեծ Սեպասար համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ախուրյան և Աշոցք գետերի միացման տեղում, սահմանագիծը, հարավարևմտյան ուղղությամբ Ախուրյան գետով, թիվ 1-30 սահմանակետերով անցնելով 3509մ, հասնում է Կրասար, Ալվար և Փոքր Սեպասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3509 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՍԱՐՁԻ ՀԱՌԻՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հառիճ համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սարալանջ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Նահապետավան գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սարալանջ գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Արագածոտնի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Սառնաղբյուր գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով՝ Լեռնակերտ գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Պեմզաշեն գյուղական համայնքին, «Ը»-«Թ» հատվածով՝ Արթիկ քաղաքային համայնքին, «Թ»-«Ա» հատվածով՝ Անուշավան գյուղական համայնքին:

ՀԱՌԻՃ – ՍԱՐԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Ձորի եզրին գտնվող Հառիճ, Սարալանջ և Անուշավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով ուղղվում է դեպի հարավ, անցնելով թիվ 1 սահմանակետով 69մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը, նորից անցնելով ձորով, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 3-8 սահմանակետերով 789մ, հասնում է ձորի եզրին գտնվող Սարալանջ, Հառիճ և Նահապետավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 858մ է:

ՀԱՌԻՃ – ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Հառիճ, Նահապետավան և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ, անցնելով 121մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողերի եզրերին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով 55մ, հասնում է 1970.0մ նիշ ունեցող եռանկյունաչափական թիվ 2 սահմանակետին,

որից հետո սահմանագիծը, թեքվելով հարավ, անցնելով քարհանքի եզրով 87մ, հասնում է քարհանքի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, քարհանքի եզրով թիվ 4-5 սահմանակետերով անցնելով 615մ, հասնում է Արթիկ -Արագած միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի արևմուտք, միջհամայնքային ճանապարհով անցնելով 271մ, հասնում է միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի հարավ, հատելով միջհամայնքային ճանապարհը և ջրանցքը, սեփականաշնորհված վարելահողերի եզրերով, թիվ 8-12 սահմանակետերով անցնելով 672 մ, հասնում է բնակավայրի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ բնակավայրի եզրով և թիվ 14 սահմանակետով անցնելով 181մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով ձորով և բնակավայրի եզրով 247մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին: Սահմանագիծը, թիվ 16 սահմանակետից թեքվելով դեպի հարավ-արևելք և անցնելով 34մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ, անցնելով բնակավայրի եզրով, ձորով և թիվ 18-30 սահմանակետերով 1597մ, հատելով Մանթաշի ջրանցքը, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով դաշտային ճանապարհի եզրով 246մ, հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, ձորով և սեփականաշնորհված վարելահողերի եզրով, թիվ 33-40 սահմանակետերով անցնելով 729մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ ձորով, թիվ 42-50 սահմանակետերով անցնելով 1142մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը, անցնելով դեպի արևելք, ապա հարավ-արևելք, ձորով և սեփականաշնորհված վարելահողերի եզրերով, թիվ 52-65 սահմանակետերով 1685մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողերի եզրերին գտնվող թիվ 66 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը, նորից անցնելով ձորով դեպի հարավ, թիվ 67 սահմանակետով հատելով դաշտային ճանապարհը 454մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 68 սահմանակետին: Թիվ 68 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 69 սահմանակետով 224մ, հասնում է թիվ 70 սահմանակետին: Թիվ 70 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ, անցնելով 248մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 71 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, ձորով թեքվելով

դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 72 սահմանակետով 429մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 73 սահմանակետին: Թիվ 73 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում է դաշտային ճանապարհը, անցնելով 528մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 74 սահմանակետին: Թիվ 74 սահմանակետից սահմանագիծը, շարունակվելով նույն ուղղությամբ, հատում է ձորը և, անցնելով 503մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 75 սահմանակետին: Թիվ 75 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով ձորով 6390մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում է ձորի եզրին գտնվող Հառիճ, Սարալանջ և Նահապետավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16456մ է:

ՀԱՌԻՃ – ՍԱՐԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Ձորի եզրին գտնվող Հառիճ, Սարալանջ և Նահապետավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնելով սարի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետով 867 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, անցնելով 501մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, հատելով ձորը, անցնելով 410մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով ձորը, անցնելով թիվ 5-7 սահմանակետերով 2000մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնելով 298մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնելով թիվ 10 սահմանակետով 584մ, հասնում է սարի գագաթին գտնվող Հառիճ, Սարալանջ գյուղական համայնքների և Արագածոտն մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4659 մ է:

ՀԱՌԻՃ – ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Շիրակի և Արագածոտնի մարզերի սահմանների հետ:

ՀԱՌԻՃ – ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Չ»

Չորի եզրին գտնվող Հառիճ, Սառնաղբյուր և Լեռնակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Չ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 454մ, հասնում է 3010.1մ նիշ ունեցող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 688մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ 646մ, հասնում է 3024.6մ նիշ ունեցող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 318մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում է 376մ, հասնում է Հառիճ, Սառնաղբյուր գյուղական համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Չ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2482մ է:

ՀԱՌԻՃ – ԼԵՌՆԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Չ» - «Է»

Չորի եզրին գտնվող Հառիճ, Լեռնակերտ և Պեմզաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Չ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում թիվ 1 սահմանակետով 1440մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Այդ սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ թիվ 3 սահմանակետով անցնելով 292մ, հասնում է ձորի եզրին գտնվող Հառիճ, Սառնաղբյուր և Լեռնակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Չ» - «Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1732մ է:

ՀԱՌԻՃ – ՊԵՄՉԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Ը»

Հառիճ, Պեմզաշեն գյուղական և Արթիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնելով 3555մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով թիվ 2-8 սահմանակետերով 2181մ, հասնում է ձորի եզրին գտնվող Հառիճ, Լեռնակերտ և Պեմզաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5737մ է:

ՀԱՌԻՃ – ԱՐԹԻԿ ՄԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը» - «Թ»

Հառիճ, Անուշավան գյուղական և Արթիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ, հատելով Արթիկ - Արագած միջհամայնքային ճանապարհը, անցնելով 373մ, հասնում է Արթիկ քաղաքի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևմուտք, քարհանքի և քաղաքի եզրով, թիվ 2 սահմանակետով անցնելով 485.0մ, հասնում է ձորի և քարհանքի հատման տեղում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևելք, հատելով ձորը, անցնելով քարհանքի եզրով, թիվ 4-6 սահմանակետերով 1668մ, հասնում է քարհանքի եզրին գտնվող 2019.3մ նիշ ունեցող թիվ 7 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ, թիվ 8 սահմանակետով հատելով Մանթաշի ջրանցքը, անցնելով 724մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 10-15 սահմանակետերով անցնելով 1087մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 16 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով ձորով, թիվ 17-20 սահմանակետերով 861մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին: Սահմանագիծը, թիվ 21 սահմանակետից շարունակվելով նույն ուղղությամբ, սարի գագաթին գտնվող թիվ 22 սահմանակետով անցնելով 998մ, հասնում է 2408.4մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող եռանկյունաչափական թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը, անցնելով հարավարևելյան ուղղությամբ 195մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի արևելք և, անցնելով 543մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով ձորով, թիվ 26-38 սահմանակետերով 1312մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով 460մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք և, անցնելով թիվ 41-45 սահմանակետերով 3041 մ, հասնում է Հառիճ, Պենգաշեն գյուղական և Արթիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20743մ է:

ՀԱՌԻՃ – ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ» - «Ա»

Հառիճ, Անուշավան և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ուղղվում է հյուսիս-արևմուտք և, անցնելով թիվ 1 սահմանակետով 370մ, հասնում է քարհանքի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ-արևմուտք և անցնելով 281մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ և, անցնելով 501մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որտեղից սահմանագիծը, թեքվելով արևմուտք և անցնելով թիվ 5-6 սահմանակետերով 356մ, հասնում է Հառիճ, Անուշավան գյուղական և Արթիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1583մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հարթաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լոռու մարզին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Մուսայելյան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Վարդաղբյուր գյուղական համայնքին, հյուսիսից և արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Զույգաղբյուր գյուղական համայնքին:

ՀԱՐԹԱՇԵՆ – ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Շիրակի և Լոռու մարզերի սահմանների հետ:

ՀԱՐԹԱՇԵՆ – ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Աշոցք-Տաշիր միջմարզային նշանակություն ունեցող ճանապարհի եզրին գտնվող Հարթաշեն, Մուսայելյան գյուղական համայնքների և Լոռու մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով ճանապարհով 6125մ, հասնում է նույն ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում թիվ 2 սահմանակետով 1333մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 4-6 սահմանակետերով անցնելով 1209մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատելով միջհամայնքային ճանապարհը, վարելահողերի եզրերով անցնելով 510մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորը, փոքրիկ լճակը, ապա միջհամայնքային ճանապարհը, անցնելով 1424մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը, հատելով միջհամայնքային ճանապարհը, ապա գետը, թիվ 10-11 սահմանակետերով կրկին հատելով դաշտային

ճանապարհը, թիվ 12-14 սահմանակետերով անցնելով 2182մ, հասնում է Հարթաշեն, Մուսայելյան և Վարդաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12783մ է:

ՀԱՐԹԱՇԵՆ - ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Հարթաշեն, Վարդաղբյուր և Ջուլգաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, վարելահողերի եզրերով, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1077մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ անցնելով 420մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվելով հարավ, անցնելով 145մ, հասնում է Հարթաշեն, Մուսայելյան և Վարդաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1642մ է:

ՀԱՐԹԱՇԵՆ - ՋՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Ջուլգաղբյուր, Հարթաշեն գյուղական համայնքների և Լոռու մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, դաշտային ճանապարհով հատելով ձորերը, անցնում 5223մ, հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, դաշտային ճանապարհով անցնում 653մ, հասնում ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով անցնում 2245մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 567մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս, անցնում 880մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով թիվ 6 սահմանակետով 832մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 947մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ թիվ 9-11 սահմանակետերով անցնում 3141մ, հասնում սեփականաշնորհված

վարելահողերի եզրերին գտնվող թիվ 12 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Ջուլգաղբյուր-Հարթաշեն միջհամայնքային ճանապարհը, ապա Դուկասյան գետը, թիվ 13-15 սահմանակետերով անցնում է 2106մ, հասնում Ջուլգաղբյուր, Հարթաշեն և Վարդաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16594մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հոռոմ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսակերտ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Սարատակ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Հովտաշեն գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Վարդաքար գյուղական համայնքին, արևելքից «Ե»-«Զ» հատվածով՝ Նոր կյանք գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Զ»-«Է» հատվածով՝ Տուֆաշեն գյուղական համայնքին, հարավից «Է»-«Ը» հատվածով՝ Հայրենյաց գյուղական համայնքին, «Ը»-«Թ» հատվածով՝ Մարայիկ քաղաքային համայնքին, արևմուտքից «Թ»-«Ժ» հատվածով՝ Լուսաղբյուր գյուղական համայնքին, «Ժ»-«Ա» հատվածով՝ Գուսանագյուղ գյուղական համայնքին:

ՀՈՌՈՄ - ԼՈՒՍԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Հոռոմ-Գուսանագյուղ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Հոռոմ, Լուսակերտ և Գուսանագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևելք, անցնելով ճանապարհով, թիվ 1-3 սահմանակետերով 3026մ, հասնում է միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Հոռոմ, Լուսակերտ և Սարատակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3026մ է:

ՀՈՌՈՄ – ՍԱՐԱՏԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Հոռոմ, Լուսակերտ և Սարատակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, Գուսանագյուղ-Արթիկ միջհամայնքային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնելով դեպի արևելք 1512մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը,

թեքվելով դեպի հյուսիս-արևելք, անցնելով բնակավայրի եզրով, թիվ 3-5 սահմանակետերով 475մ, հասնում է բնակավայրի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևելք, հատելով Կարկաչան գետը և անցնելով 75մ, հասնում է Հոռոմ–Սարատակ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Հոռոմ, Սարատակ և Հովտաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2062մ է:

ՀՈՌՈՄ – ՀՈՎՏԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Հոռոմ–Սարատակ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Հոռոմ, Սարատակ և Հովտաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով Սարատակ–Հոռոմ միջհամայնքային ճանապարհով 119մ, հասնում է Սարատակ–Հոռոմ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվելով արևելք, անցնելով բնակավայրի եզրով 352մ, հասնում է Հոռոմ և Հովտաշեն բնակավայրերի հատման տեղում գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ բնակավայրերի եզրերով անցնելով 228մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվելով հարավ-արևելք, նորից անցնելով բնակավայրերի հատման սահմանով, թիվ 4-6 սահմանակետերով 270մ, հասնում է Հոռոմ–Հովտաշեն միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հյուսիս, հատելով միջհամայնքային ճանապարհը, անցնելով 115մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևելք, բնակավայրերի եզրերով, թիվ 9 սահմանակետով անցնելով 252մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, ապա թեքվելով դեպի հարավ-արևելք, թիվ 11-12 սահմանակետերով, Հովտաշեն բնակավայրի եզրով անցնելով 379մ, հասնում է բնակավայրի և պահուստային վարելահողի սահմանազրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի արևմուտք, անցնելով պահուստային վարելահողի եզրով 62մ, հասնում է պահուստային վարելահողի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևելք, անցնելով 341մ, հասնում է Վարդաքարի ջրամբարի եզրին գտնվող Հոռոմ, Հովտաշեն և Վարդաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2117մ է:

ՀՈՌՈՄ – ՎԱՐՂԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Վարդաքարի ջրամբարի եզրին գտնվող Հոռոմ, Հովտաշեն և Վարդաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ջրամբարի վրայով թեքվելով դեպի հարավ, անցնելով 400մ, հասնում է ջրամբարի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի հարավ-արևելք, հատելով Հոռոմ-Արթիկ միջնարգային ճանապարհը և անցնելով 265մ, հասնում է բլրի գագաթին գտնվող Հոռոմ, Վարդաքար և Նոր կյանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 665մ է:

ՀՈՌՈՄ – ՆՈՐ ԿՅԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Հոռոմ, Վարդաքար և Նոր կյանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևմուտք, փոքրիկ բլուրների վրայով, թիվ 1-4 սահմանակետերով անցնելով 1315մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որը համընկնում է «Հոռոմ» կոչվող եռանկյունաչափական 1704.7մ նիշ ունեցող գագաթին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հարավ-արևելք, անցնելով թիվ 6-8 սահմանակետերով 941մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, ապա կտրուկ թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով 480մ, հասնում է բարձունքում գտնվող Հոռոմ, Նոր կյանք և Տուֆաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2737մ է:

ՀՈՌՈՄ – ՏՈՒՖԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Է»

Հոռոմ, Նոր կյանք և Տուֆաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 1-2 սահմանակետերով, հատելով Տուֆաշեն-Հոռոմ միջհամայնքային ճանապարհը, այնուհետև անցնելով բլրի գագաթների վրայի թիվ 3-7 սահմանակետերով 1008մ, հասնում է Ժայռի վրա գտնվող Հոռոմ, Տուֆաշեն և Հայրենյաց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1008մ է:

ՀՈՌՈՄ – ՀԱՅՐԵՆՅԱՅ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Ը»

Հոռոմ, Տուֆաշեն և Հայրենյաց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով 297մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որից հետո սահմանագիծը, թեքվելով դեպի արևմուտք, անցնելով 448մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով հյուսիս-արևմուտք, անցնելով թիվ 3-4 սահմանակետերով 1277մ, հասնում է քարհանքի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ, հատում է Հոռոմ–Հայրենյաց միջհամայնքային ճանապարհը, այնուհետև առուն, թիվ 6 սահմանակետով անցնում 530մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը, ձորով, սեփականաշնորհված վարելահողերի եզրերով ուղղվելով դեպի արևմուտք, թիվ 8-10 սահմանակետերով անցնելով 333մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 12-13 սահմանակետերով, հատում է առուն, որից հետո անցնելով թիվ 14-16 սահմանակետերով 658մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատելով Երևան-Գյումրի միջպետական նշանակության ճանապարհը, անցնելով 144մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվելով դեպի հարավ, անցնելով 64մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 20-22 սահմանակետերով 1203մ, հասնում է սեփականաշնորհված վարելահողի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը, նույն ուղղությամբ անցնելով թիվ 24 սահմանակետով, հատում է Մարալիկ–Հայրենյաց միջհամայնքային ճանապարհը 1168մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Այս սահմանագիծը, փոխելով ուղղությունը դեպի հարավ, անցնելով 438մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, անցնելով 710մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ, անցնելով 297մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 29 սահմանակետով 774մ, հասնում է Հոռոմ, Հայրենյաց գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8342մ է:

ՀՈՌՈՄ – ՄԱՐԱԼԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը» - «Թ»

Գաշտային ճանապարհի եզրին գտնվող Հոռոմ, Լուսաղբյուր գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով դաշտային ճանապարհով, թիվ 1-8 սահմանակետերով 1055մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը, կտրուկ թեքվելով դեպի հյուսիս-արևելք, անցնելով 497մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնելով թիվ 11-12 սահմանակետերով, հատելով դաշտային ճանապարհը 635մ, հասնում է Հոռոմ, Հայրենյաց գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2186մ է:

ՀՈՌՈՄ – ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ» - «Ժ»

Հոռոմ, Լուսաղբյուր և Գուսանագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևմուտք, ձորակից դուրս գալով և անցնելով 173մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի հարավ- արևմուտք, անցնելով թիվ 2–4 սահմանակետերով 1533մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը, ուղղվելով դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 6-28 սահմանակետերով անցնելով 1882մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լուսաղբյուր, Հոռոմ գյուղական և Մարալիկ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3588մ է:

ՀՈՌՈՄ – ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ժ» - «Ա»

Հոռոմ-Գուսանագյուղ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Հոռոմ, Լուսակերտ և Գուսանագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով թիվ 1-4 սահմանակետերով, հատելով Գուսանագյուղ-Հայրենյաց միջհամայնքային

ճանապարհը, այնուհետև անցնելով թիվ 5-7 սահմանակետերով 2611մ, հասնում է պահուստային վարելահողի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը, անցնելով նույն ուղղությամբ, փոքր բարձրությունների վրայով, թիվ 9-11 սահմանակետերով հատելով ձորը 1469մ, հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ձորով, թիվ 13-32 սահմանակետերով անցնելով 1382մ, հասնում է Հոռոմ, Լուսաղբյուր և Գուսանագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5461մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

